

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հին եւ նոր պարսկանոն շարականներ (է+198).
 յոյս ընծայեց Սահակ վարդապետ Սմասունի. Միաբան
 Մայր արոռոյ Ս. Էջմիածնի. արդեամբ եւ ծախիւք տառն
 Սուրբառայ արքեպիսկոպոսի Պարգեան. Վաղարշապատ,
 Ելիսրաւարժ սպարան Մայր արոռոյ Ս. Էջմիածնի, 1911:

Մեր եկեղեցու ժամերգութեան խոշոր մասն են կազմում
 այն հոգևոր երգերը, որոնք շարական են կոչւում: Զնայելով այս
 բառը առաջին անգամ գործ է ածել ժա. դարում Պօղոս Տա-
 րնեցին, բայց շարականների հնութիւնը ըստ մեր յետազայ աւան-
 դութեան հասնում է մինչև ե. դարը: Որոնցից շատերի հեղի-
 նակներ են համարւում Սահակ, Մեսրոպ և այլք: Այս աւանդու-
 թիւնը խաղտեց Ներսէս վ. Տէր Միքայէլեանը իւր Des Armenitche
 Hymnarium լուրջ աշխատութեամբ: Սահակ վարդապետի այս աշ-
 խատութեան նպատակն էապէս այլ է. նա առաջին անգամ հրա-
 տարակում է «կանոնական կարգով ընդունուած և տարածուած
 շարականներից» դուրս գտնուած բայց «չտպուած» շարականներ»
 Մայր Աթոռի մատենադարանի 73 օրինակ ձեռագիր շարական-
 ներից և ուրիշ աշխատութիւններից» կոչելով պարականոն կամ
 անվաւեր շարականներ, որ բաժանում է երկուսի. հին մինչև
 ԺԴ. դարը և նոր՝ այնուհետև կիրարկուածներ. բայց յետոյ այս
 կամ այն պատճառով խափանուած:

Սահակ վարդապետը այս նիւթին հմուտ լինելով՝ իրրև
 երկար տարիներ Մայր Աթոռի մատենադարանապետ հետը միա-
 ցրել է ծանօթութեան բոլոր ձեռագրերի և աղբիւրների և կարո-
 ղացել է իւր յատուկ բարեխղճութեամբ այս գործը համարեա
 անթերի լոյս ընծայել:

Աշխատութիւնս պատիւ է բերում հեղինակին և հրատա-
 րակչին, որ տարիներից ի վեր սատարում է հայ բանասէրների
 երկերի հրատարակութեամբ:

Ս Կանական.